ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2023 թվականի N 836

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 83-Ա որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 495 որոշմամբ ստեղծված դրամական և նյութական օգնություն տրամադրելու համար Վանաձորի համայքնապետարան դիմած քաղաքացիների դիմումների քննարկման հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 02-ի թիվ 6 արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1 դասով նախատեսված միջոցներից աջակցության նպատակով 43/ քառասուներեք/ քաղաքացու հատկացնել 1 445 000 (մեկ միլիոն չորսհարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2023 թվականի N 837

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի հանրային ծառայության՝ համայնքի ղեկավարի խորհրդականների պաշտոնների անձնագրերը՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2023 թվականի N 838

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 06.06.2023 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀԶ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 06.06.2023 թվականի թիվ 03Ա/27, 03Ա/28, 03Ա/29, 03Ա/30, 03Ա/31, 03Ա/32, 03Ա/33, 03Ա/34, 03Ա/35, 03Ա/36 և 03Ա/37 զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի Բանակի թիվ 14-ի բնակիչ Ա. Լոռյանի ընտանեկան գերեզմանատանը շինարարական աշխատանքներին խոչընդոտող 2 /երկու/ ծառերի, Թատերական 6-1/1 և Թատերական 6-1/3 տարածքում առկա ընկուզենու, Տիգրան Մեծի թիվ 22Գ հասցեում առկա 1 /մեկ/ չորացած ծառի, Երևանյան խճուղու 66 շենքի դիմացի մայթեզրին առկա 1 /մեկ/ չորացած ծառի, թիվ 24 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի բակում առկա, վտանգ ներկայացնող 2 /երկու/ եղևնիների, Չուխաջյան 62/1-24 հասցեի բնակիչ Ա. Խաչատրյանի ավտոտնակի ետնամասում առկա, վտանգ ներկայացնող 1 /մեկ/ կիսաչոր ծառի, «Վանաձորի բաղնիքային տնտեսություն» ՓԲԸ-ի տարածքում առկա 2 /երկու/ վտանգ ներկայացնող ծառերի, Լոռու մարզի մարզպետարանին հարակից 1 /մեկ/ թեքված եղևնու, Աղայան 81-3 հասցեում առկա 1 /մեկ/ չորացած ծառի, Տպագրիչների 5-12 հասցեի բնակիչ Լ. Գորոբեցի տնակին կից 2 /երկու/ չորացած ծառերի, Երևանյան խճուղում, զինվորական զորամասի մայթեզրին առկա 2 /երկու/ չորացած ծառերի հատման համար:

2. «Նեցուկ ՀԶ» ՀՈԱԿ-ին իրականացնել վերոնշյալ ծառերի հատման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2023 թվականի N 839

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 639
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփան Հենրիկի Ստեփանյանի լիազորված անձ՝ Գրիգոր Սարգսի Ստեփանյանի 19.05.2023թ. թիվ 02/8126 դիմումը, 29.09.2022թ. տրված թիվ 4542 (նոտարական ակտի կոդ: 741-20220929-90-6308568) լիազորագիրը, 20.08.96թ. տրված սեփականության վկայագիրը, 30.11.2022 թվականի Շահումյանի գյուղապետարանի թիվ 424 տեղեկանքը, 05.05.2023թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթի կասեցման մասին թիվ Կ-05052023-06-0025 ծանուցումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 20 ապրիլի 2023 թվականի թիվ 639 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 20 ապրիլի 2023 թվականի «Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 5 հասցեում գտնվող բնակելի նշանակության շինությունների զբաղեցրած հողամասի և դրա վրա գտնվող շինության նկատմամբ Ստեփան Հենրիկի Ստեփանյանի սեփականության իրավունքը ճանաչելու, փոստային հասցե տրամադրելու և Շահումյան համայնքի 26 ապրիլի 2012 թվականի թիվ 56-ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 639 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1. Որոշման վերնագիրը «ճանաչելու» բառից հետո լրացնել «շինության գործառնական նշանակությունը փոխելու» բառերով:

2. Որոշման նախաբանը «ենթակետով» բառից հետո լրացնել «ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով» բառերով:

3. Որոշումը լրացնել հետևյալ նոր 3-րդ կետով.

«3. Փոխել Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 10-րդ փողոց, 1-ին նրբանցք, 5 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունը հասարակական նշանակության շինությունից՝ անհատական լիցքակայանից, բնակելի նշանակության շինության՝ բնակելի տան:»:

4. Որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«Շինության գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:»

4. Որոշման 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը կարդալ որպես 4-րդ, 5-րդ և 6-րդ կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2023 թվականի N 840

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՍՆԻԿԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քրիստինե Սասնիկի Ղևոնդյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, ***որոշում եմ.***

1. 2023թ. հունիսի 19-ից լուծել Վանաձորի համայնքապետարանի և ԵՄ «Դաշինք հանուն կանաչ և կայուն կառավարման» ծրագրի շրջանակներում որպես ծրագրի հաշվապահ Քրիստինե Սասնիկի Ղևոնդյանի հետ 01 ապրիլի 2021 թվականին կնքված թիվ 03 աշխատանքային պայմանագիրը և նրան ազատել աշխատանքից:

2. Ընդունվել է աշխատանքի 01 ապրիլի 2021 թվականին:

3. Ֆինանսական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 15
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2023 թվականի N 841

ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԱՐԱՄ ԱՐՍԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով զինվորական ծառայության ընթացքում մահացած զինծառայող Արամ Արսենի Մանուկյանի մոր՝ Արմինե Արտյոմի Գրիգորյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հաշվի առնելով Վանաձոր համայնքի ղեկավարի 22.12.2016 թվականի թիվ 614-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 09.06.2023թ. եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Հաստատել զինվորական ծառայության ընթացքում մահացած զինծառայողի բնակարանի կարիքավոր ընտանիքի ամփոփ ցուցակը:

2. Սույն որոշումը և ամփոփ ցուցակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 15
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2023 թվականի N 842

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի գնումները հաստատելու մասին» թիվ 71 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. հունիսի 15
ք.Վանաձոր